

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՄՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ

ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴ

2015թ. մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ստորագրվել է առևտրի և ներդրումների շրջանակային Համաձայնագիրը՝ հայ-ամերիկյան տնտեսական համագործակցության ամրապնդման և հետագա խորացման, կողմերի միջև ապրանքների և ծառայությունների առևտրի ընդլայնման ու դիվերսիֆիկացման, գործարար նախաձեռնությունների ակտիվացման նպատակով: Համաձայնագրով հիմնվել է Հայաստան-ԱՄՆ առևտրի և ներդրումների հարցերով Խորհուրդ, որը նախագահում են հայկական կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարը, ամերիկյան կողմից՝ ԱՄՆ Առևտրի ներկայացուցչի գրասենյակը:

Նշյալ խորհրդի անդրանիկ նիստը կայացել է 2015թ. նոյեմբերի 17-ին Երևանում, իսկ երկրորդ նիստը Վաշինգտոնում՝ 2018թ. մարտի 19-ին: Նիստի արդյունքում նախանշվել են փոխադարձ առևտրի և ներդրումների խթանման հարցում կատարվելիք հետագա քայլերը և համագործակցության ընդլայնման ուղղությունները: Ներկայումս աշխատանքներ են տարվում ոլորտային 8 աշխատանքային խմբերում: